

Համաժողովի հարգելի մասնակիցներ

Արցախի Հանրապետության Կառավարության անունից թույլ տվեք ողջունել ձեզ և երախտագիտություն հայտնել Համաժողովի կազմակերպիչներին, Արցախի զբոսաշրջության բնագավառը և դրա զարգացման հեռանկարները ներկայացնելու հնարավորություն ընձեռելու համար:

Տիկնայք և պարոնայք,

Ինչպես հայտնի է, վերջին տասնամյակում միջազգային զբոսաշրջությունը զարգացման բարձր տեմպեր է արձանագրում, և Արցախը՝ որպես միջազգային զբոսաշրջության մեծ ընտանիքի անդամ, ևս անմասն չի մնում այդ գործընթացներից: Արցախի տնտեսության գերակա ճյուղ համարվող զբոսաշրջության բնագավառը 2007 թվականից ի վեր կայուն եւ աննախադեպ զարգացում է ապրում:

Նշված ժամանակահատվածում օտարերկրյա քաղաքացիների այցելությունների թիվը քառապատկվել է՝ հասնելով գրեթե 17000-ի: Կառուցվել են 50-ից ավել տարբեր մակարդակի սպասարկման որակով հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ 1350 մահճակալ տեղով: Ավելացել է նաև զբոսաշրջիկների գիշերակացը հասնելով միջինը մինչև 4 օրվա:

Արցախում զբոսաշրջությունը ներմուծվող տարադրամի հիմնական աղբյուրներից է: Այսպես, 2016 թվականին օտարերկրյա զբոսաշրջիկները 3 միլիարդ ՀՀ դրամին համարժեք գումար են ծախսել երկրում, ինչը կազմում է ՀՆԱ-ի գրեթե 2 տոկոսը:

Այդ արդյունքներին հասնելուն մեծապես խթանել են մի շարք գործոններ, որոնցից կառանձնացնեի զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը, մարքեթինգային քաղաքականությունը և որ պակաս կարևոր չէ՝ Արցախում զբոսաշրջության ձևերի դիվերսիֆիկացումը՝ նոր զբոսաշրջավայրերի, պատմամշակութային և բնապատմական արգելոցների ստեղծման, ինչպես նաև նոր՝ ունիկալ ծառայությունների ներդրման շնորհիվ: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում կարողացանք կրոնական տուրիզմից բացի զբոսաշրջության այլ ձևեր զարգացնել:

Նախկինում Արցախ այցելած զբոսաշրջիկների շրջագայությունները սահմանափակվում էին կրոնական նշանակության վայրերով. Գանձասարի, Ամարասի վանքեր, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի:

Սակայն, Շուշի քաղաքում ստեղծված մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների, ինչպես նաև 2010 թվականից Արցախի տարածքում պատմամշակութային և բնապատմական արգելոցների հիմնադրման շնորհիվ, այսօր Արցախի ամենաայցելվող վայրերը զբոսաշրջության տարբեր ձևերի և նպատակների համար են ծառայում: Այսպես, Գանձասարի վանական համալիրը հիմնականում որպես կրոնական նշանակություն ունեցող վայր է դիտարկվում, Շուշի քաղաքը մշակութային տուրիզմի

կենտրոն է, Հունտոի կիրճը՝ որպես ակտիվ տուրիզմի համար նախատեսված զբոսաշրջավայր: Արցախի Տիգրանակերտն իր բացառիկ պատմա-մշակութային ժառանգության և հնավայրի տարածքում արգելոցի հիմնադրման շնորհիվ, վեր է ածվել հնագիտական տուրիզմի խոշոր կենտրոնի, Հայաստանի ու Արցախի մասշտաբներով:

Ծաղկաշատում հիմնված ազգագրական թաղամասը և Տյաք գյուղի տարածքում գործող արգելոցը հիանալի հնարավորություն են ընձեռում էթնո-տուրիզմի զարգացման համար:

Արցախի պետականության անդադար շարունակականության խորհրդանիշ՝ պատմա-մշակութային հուշարձանների համալիր հանդիսացող Տողի մելիքական ապարանքը վերջին տարիների վերականգնման և հանրահռչակման աշխատանքների շնորհիվ, արդեն ընդգրկվում է մշակութային տուրիզմ նախընտրող զբոսաշրջիկների այցելությունների ցանկի մեջ: Այն նաև դարձել է արդեն իսկ ինքնուրույն կյանքով ապրող եւ զարգացող Արցախյան գինու ամենամյա փառատոնի կազմակերպման վայր: Փառատոն, որն այստեղ է բերում հազարավոր այցելուների:

Նշված բոլոր և այլ զբոսաշրջավայրերի ընտրությունը՝ որպես Արցախի տուրիզմի զարգացման հիմք, իհարկե պատահականորեն չի եղել: Երկրի զբոսաշրջության զարգացման համար հավելյալ խթանիչ գործոններ ստեղծելու նպատակով, 2013 թվականին որդեգրվել է զբոսաշրջային երթուղիների զարգացման քաղաքականությունը, ինչը ենթադրում է զբոսաշրջության միջոցով երթուղիների վրա գտնվող բնակավայրերի, պատմա-մշակութային օբյեկտների և բնական ռեսուրսների կայուն զարգացում: Երթուղիների զարգացման ծրագիրն իրականացվում է արդեն մի քանի տարի, պետության և մասնավոր հատվածի համատեղ ջանքերով, որի արդյունքում երթուղիների ողջ երկայնքով կունենանք բարեկարգ զբոսաշրջավայրեր, ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող ենթակառուցվածքներ, զարգացող փոքր և միջին բիզնես:

Ծրագրի իրականացման դեպքում, երթուղիների ողջ երկայնքով գտնվող մոտ երեսուն հազար բնակչությամբ համայնքները հնարավորություն կունենան ներգրավվելու զբոսաշրջիկների սպասարկման ոլորտում: Տվյալ շրջաններում արդեն իսկ զարգացում են ապրում ավանդական արհեստները, ճանապարհային առևտուրը՝ մասնավորապես, և սպասարկման ոլորտը՝ ընդհանրապես :

Այսօր ակտիվորեն իրականացվում է Արցախի Հարավային զբոսաշրջային երթուղու զարգացման ծրագիրը: Ստեփանակերտից մինչև Արաքսի հովիտ ձգվող երթուղու վրա գտնվող գրեթե բոլոր զբոսաշրջավայրերը բարեկարգված կամ վերականգնման փուլում են և հասանելի են տարբեր տիպի տրասնպորտային միջոցների համար: Զբոսաշրջավայրերի բարեկարգման հետ մեկտեղ ծրագիրը ենթադրում է գյուղական միջավայրում BnB կարգի հյուրանոցային տնտեսության

օբյեկտների զարգացում, գյուղական արտադրանքի վաճառքի համար հատուկ վայրերի ստեղծում, զուգարանների ու ավտոկայանատեղիների կառուցում:

Նույն ոգով նախատեսվում է նաև Հյուսիսային զբոսաշրջային երթուղու զարգացումը: Սակայն այստեղ երթուղին այլ, ավելի կարևոր նշանակություն է ձեռք բերել Մարտակերտ-Վարդենիս մայրուղու գործարկման համատեքստում:

Ավտոմայրուղու գործարկումը հնարավորություններ է ստեղծել Հայաստան-Արցախ շրջանակային մեծ երթուղու կոնցեպտի մշակման համար: Այսուհետ Արցախ այցելող զբոսաշրջիկները ստիպված չեն լինելու Արցախ այցելությունն ավարտելուց հետո Երևան-Գորիս ճանապարհով հետ վերադառնալ Երևան, այլ Արցախի հյուսիսային հատվածներով հնարավորություն կունենան Վարդենիս քաղաքով հասնելու Սևանի ափ: Շրջանակային երթուղու զարգացման, հանրահռչակման ու օգտագործման գաղափարը դեռ քննարկումների փուլում է, սակայն արդեն իսկ կարևոր է ունենալ այն համահայկական նշանակության երթուղու վերածելու հստակ տեսլական:

Հանրահայտ իրողություն է, որ Արցախի աննախադեպ զարգացումը հնարավոր դարձավ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության հզոր գործոնի շնորհիվ: Հատկապես, սփյուռքահայության բարոյական եւ նյութական ներդրումը ակնառու է զբոսաշրջության բնագավառում:

Այդուհանդերձ, ստիպված ենք արձանագրել, որ Հայաստան այցելած Սփյուռքում բնակվող հայերի նույնիսկ 5 տոկոսը չի այցելում Արցախ և հենց այստեղ է, որ մենք կարիք ունենք համակարգված ու հետևողական աշխատանքների, թե այս համաժողովի շրջանակներում, թե առօրյա աշխատանքային պայմաններում:

Հարգելի գործընկերներ,

Մինչև 2020 թվականը Հայաստանում ակնկալվում է մինչև երեք միլիոն զբոսաշրջիկների հոսք: Այս իրողությունը մենք դիտարկում ենք որպես մեծ հնարավորություն Հայաստանում և Արցախում սոցիալ-տնտեսական, պատմա-մշակութային ու բնական միջավայրի զարգացման նպատակներն իրականություն դարձնելու համար: Համոզված եմ, որ այս համաժողովը թույլ կտա քննարկել այդ նպատակներին հասնելու հնարավորությունները :

Ավարտելով խոսքս, թույլ տվեք ևս մեկ անգամ շնորհավորել Ձեզ այս հիշարժան օրվա կապակցությամբ՝ համաժողովի մասնակիցներին մաղթել բեղմնավոր աշխատանք և նորանոր հաջողություններ:

Շնորհակալություն